

**ԻՐԱԿԱՆ ԹՎԵՐ  
ԿՈՈՐԴԻՆԱՏՆԵՐ**

**ԹԵՍՏ 1**

- Գտեք բոլոր այն երկնիշ թվերի քանակը, որոնք փոքր են 43-ից:  
1) 31                      2) 33                      3) 32                      4) 42
- Գտեք 876-ը 15-ի բաժանելիս ստացվող մնացորդը:  
1) 8                        2) 16                        3) 6                        4) այլ պատասխան
- 746\* թվի մեջ աստղանիշը ինչ թվանշանով պետք է փոխարինել, որ ստացված քառանիշ թիվը բաժանվի 9-ի:  
1) 0                        2) 1                        3) 3                        4) 5
- Քանի՞ քառակուսի սանտիմետր է պարունակում մեկ քառակուսի դեցիմետրը:  
1) 10                        2) 100                        3) 1000                        4) այլ պատասխան

**ԹԵՍՏ 2**

- 136-ից փոքր քանի՞ եռանիշ թիվ կա:  
1) 135                      2) 99                        3) 36                        4) 35
- Գտեք այն ամենամեծ եռանիշ թիվը, որը 15-ի բաժանելիս մնացորդում ստացվում է 6:  
1) 3                        2) 6                        3) 9                        4) այլ պատասխան
- 56\*7 թվի գրության մեջ աստղանիշը փոխարինենք այնպիսի թվանշանով, որ ստացված քառանիշ թիվը փոքր լինի 5630-ից և բաժանվի 3-ի:  
1) 3                        2) 6                        3) 9                        4) 0
- Քանի՞ բուլետ է  $\frac{5}{12}$  ժամը:  
1) 20                        2) 25                        3) 30                        4) 40

### ԹԵՍՏ 3

- Քանի՞ պարզ թիվ կա 20 և 30 թվերի միջև:  
1) 5                      2) 4                      3) 3                      4) 2
- Հետևյալ գումարներից ո՞րն է ամենամեծը.  
1)  $45+388$             2)  $40+392$             3)  $50+384$             4)  $52+381$
- Նշված թվերից ո՞րն է 72 թվի քառակուսին.  
1) 144                    2) 5184                    3) 1684                    4) այլ պատասխան
- 19 հայտարար ունեցող ընդամենը քանի՞ կանոնավոր կոտորակ կա.  
1) 19                      2) 17                      3) անվերջ շատ    4) այլ պատասխան

### ԹԵՍՏ 4

- Հետևյալ գումարներից ո՞րն է ամենամեծը.  
1)  $17+785$             2)  $130+790$             3)  $132+792$             4)  $135+788$
- 3-ի բազմապատիկ քանի՞ երկնիշ թիվ կա:  
1) 33                      2) 31                      3) 30                      4) այլ պատասխան
- Հետևյալ միջակայքերից որո՞ւմ ավելի շատ պարզ թիվ կա.  
1) [10; 20]            2) [20;30]            3) [30; 40]            4) [40; 50]
- Քանի՞ կիլոգրամ է  $\frac{3}{5}$  ցենտները:  
1) 6                        2) 60                        3) 600                        4) 150

## ԹԵՍՏ 5

1. Նշեք ճիշտ հավասարությունը.

1)  $\frac{4}{5}=1,8$       2)  $7\frac{3}{4}=\frac{33}{4}$       3)  $0,125=\frac{1}{8}$ ,      4)  $\frac{4}{5}=\frac{5}{6}$ :

2. Գտնել արտահայտության արժեքը:

$$\frac{3}{5}:\frac{5}{6}+2\frac{1}{2}\cdot\frac{2}{5}-1:1\frac{1}{9}:$$

1) 1                      2) 0,82                      3) 0,8                      4) 0,75

3. Գտնել արտահայտության արժեքը.

$$(1,075-0,05):0,25:$$

1) 3,5                      2) 4                      3) 4,5                      4) 4,1

4. Հետևյալ կոտորակներից քանիսը կարելի է ներկայացնել վերջավոր տասնորդական կոտորակի տեսքով.

$$\frac{1}{25}, \frac{7}{60}, \frac{19}{48}, \frac{11}{80}, 1\frac{3}{20}, \frac{3}{28}, \frac{5}{44}, \frac{27}{300}, \frac{41}{135}:$$

5. Նշել ամենափոքր թիվը.

1) 1,75                      2)  $\frac{10}{7}$                       3)  $1\frac{3}{8}$                       4)  $\frac{8}{5}$

## ԹԵՍՏ 6

1. Նշել ճիշտ հավասարությունը.

1)  $2,05 = 2\frac{1}{5}$ ,    2)  $4,15 = \frac{415}{1000}$ ,    3)  $3\frac{1}{3} = 3,3$     4)  $5\frac{1}{50} = 5,02$

2. Գտնել արտահայտության արժեքը.

$$1 : 1\frac{7}{8} + \frac{3}{7} \cdot 3\frac{1}{2} - \frac{2}{3} : \frac{5}{6}$$

1) 1,5                      2) 1,4                      3)  $1\frac{7}{30}$                       4) 2

3. Գտնել արտահայտության արժեքը.

$$(1,225 + 0,05) : 0,25$$

1) 5                      2) 5,1                      3) 5,5                      4) 5,25

4. Հետևյալ կոտորակներից քանիսը կարելի է ներկայացնել վերջավոր տասնորդական կոտորակի տեսքով.

$$\frac{3}{11}; \frac{4}{21}; \frac{7}{5}; \frac{13}{75}; \frac{9}{50}; \frac{3}{40}; \frac{5}{64}; 2\frac{1}{24}; \frac{17}{125}:$$

5. Նշել ամենափոքր թիվը.

1)  $\frac{6}{7}$                       2)  $\frac{4}{5}$                       3)  $\frac{8}{9}$                       4) 0,875

## ԹԵՍՏ 7

1. Գտնել բոլոր ամբողջ թվերի քանակը, որոնք պատկանում են  $[-10; 16]$  միջակայքին:
2. Նշված կետերից ամենաշատը կոորդինատային հարթության ո՞ր քառորդին են պատկանում.

$$A(3; 7), \quad B(-1; 4), \quad C(-5; -2), \quad D(2; -1), \quad E(-5; 7), \quad F(4; -9), \\ G(10; 1), \quad H(-5; -5), \quad P(-7; 1), \quad Q(-3; 3), \quad R(-6; -2):$$

- 1) 1-ին                      2) 2-րդ                      3) 3-րդ                      4) 4-րդ

3. Գտնել  $AB$  հատվածի  $M$  միջնակետի կոորդինատները, եթե հայտնի են՝  $A(-3; 4), B(11; 0)$ :

- 1)  $M(8; 4)$               2)  $M(7; 2)$               3)  $M(4; 2)$               4)  $M(7; 4)$

4. Կոորդինատային հարթության վրա նշված են  $ABCD$  ուղղանկյան երեք գագաթների կոորդինատները.

$$A(2; 3), \quad B(2; -2), \quad C(6; -2):$$

Գտնել  $D$  գագաթի կոորդինատները:

- 1)  $D(6; 2)$               2)  $D(2; 6)$               3)  $D(3; 6)$               4)  $D(6; 3)$

## ԹԵՍՏ 8

1. Գտնել բոլոր ամբողջ թվերի քանակը, որոնք պատկանում են  $[-4; 21]$  միջակայքին:
2. Նշված կետերից ամենաշատը կոորդինատային հարթության ռը քառորդին են պատկանում.

$$A(-2; -1), \quad B(3; 5), \quad C(-4; 2), \quad D(-4; -4), \quad E(5; -1), \quad F(7; 7), \\ G(-5; -7), \quad H(1; 8), \quad P(-5; 4), \quad Q(2; -6), \quad R(-4; -4):$$

1) 4-րդ                      2) 3-րդ                      3) 2-րդ                      4) 1-ին

3. Գտնել  $AB$  հատվածի  $M$  միջնակետի կոորդինատները, եթե հայտնի են՝  $A(15; -7)$ ,  $B(-3; 15)$ :  
1)  $M(12; 8)$               2)  $M(6; 8)$               3)  $M(9; 11)$               4)  $M(4; 4)$
4. Կոորդինատային հարթության վրա նշված են  $ABCD$  քառակուսու երկու գագաթների կոորդինատները.

$$A(0; 0), \quad B(0; 5) :$$

Գտնել  $C$  կետի աբսցիսի և  $D$  կետի օրդինատի գումարը:

1) 5                          2) 0                          3) 10                          4) 15

## ՊԱՏԱՍԻԱՆՆԵՐ

	Թ 1	Թ 2	Թ 3	Թ 4	Թ 5	Թ 6	Թ 7	Թ 8
<b>1</b>	2)	3)	4)	3)	3)	4)	27	26
<b>2</b>	3)	2)	3)	3)	2)	3)	2)	2)
<b>3</b>	2)	4)	2)	1)	4)	2)	3)	4)
<b>4</b>	2)	2)	4)	2)	3	5	4)	1)
<b>5</b>	-	-	-	-	3)	3)	-	-